

նութիւնը: Հայերու բաժինը՝ խնդրել տալ ուսաց եւ վրացիներու օգնութիւնը\*):

«Տիրապետուած երկրին իշխանը պիտի լինէր ինքը Բէդիր-խան բէյը: Իսկ այսոր փոխարէն՝ իշխանը հայերուն պիտի տար կառավարութեան տնտեսական բաժնի մատակարարութիւնը:

Իշխանութեան զինուորական մասը պիտի կազմուէր հայերէ եւ քրդերէ խառն՝ ինչպէս էր արդէն: Յեղեբու մերձեցումը առաջ բերելու համար՝ զիմած էր ձուլումի քաղաքականութեանը՝ խնամիական կապերով, այնպէս որ քիւրան ու հայը պիտի կարողանային աղջիկ տալ ու առնել, առանց կրօնի եւ ցեղի խտրութեան, առայժմ ամէն մէկը պահելով իր կրօնի եւ ցեղի ազատութիւնը:

«Բէդիրխանը առաջադրած էր, կ'ըսեն,

\*) Բէդիրխան բէյի քաղաքական ծրագրի մէջ կը տեսնենք, որ հայոց աշխատանքի բաժին ինկած է ուսաց եւ վրացիներու զիմել, օգնութեան խնդրանքով: Պէտք է ըսել, որ Բէդիրխանը հետեւողական քաղաքականութեան մը շարունակողը կը հանդիսանայ այս պարագային, եւ զիտակ է 100 եւ 150 տարի առաջ քիւրդօ-հայ քաղաքական համաձայնութիւններուն: Ինչպէս առաջին զլուխին մէջ յիշատակած եմ, Յովսէփ Էմինը Հերակլը թագաւորին իր զիմումներուն մէջ կը յայտնէ, թէ երբ շարժում մը սկսի դէպի Տաճկաստան, հայերէ դատ՝ քիւրդերն ալ ոտքի պիտի ելնեն ընդդէմ Թուրքիոյ: Հոս արժանի է յիշատակել, որ Իսրայէլ Օրին, 1704 թուին Պֆալցի Կուրֆիւրստին ուղղած իր մէկ նամակին մէջ կը յիշատակէ բացի վրացիներէ նաեւ քիւրդերու անունը, որոնք պատրաստ են դաշնակցութեան մէջ մտնելու (Ռուսաստանի կայսրը, Վրաստանի իշխանը, Պֆալցի Կուրֆիւրստը եւ հայերը) եւ պատերազմ յայտարարելու Թուրքիոյ դէմ: Ասկէ պարզ կ'երեւի, որ հայերն ու քիւրդերը նախօրօք համաձայնութեան մը եկած էին եւ լիազօրած էին հայոց ներկայացուցիչները իրենց անունով զիմում կատարելու: Ու Բէդիրխան բէյ 150 տարի յետոյ, իր նախնիքներու ուղիով կ'ուզէր ընթանալ, հայերուն բաժին հանելով հիւսիսի օգնութեան զիմումը:

զինարան մը հիմնել իր իշխանութեան մէջ, եւ ատոր համար կ'ուզէր արուեստագէտներ զըրկել Եւրոպա. իսկ երկրի բարգաւաճման համար մեքենագիտութիւն սովորողներ՝ որ Վանի ծովի վրայ առաջաստանաւերու տեղ կանոնաւոր նաւեր շինէին, որ իրարու հետ կարողանային կապուիլ եւ շուտով հաղորդակցիլ ծովին շրջակայ քաղաքներն ու զիւրերը:

«Բէդիրխան պէյի համար քաղաքական իշխանութիւնը լինելով միայն բարձրագոյն նըստակալէտ, իրեն համար հաւասար կը նկատէր հայ եւ քիւրդ լինելը, հիմնուած լինելով այն առարկութեան վրայ՝ համոզուած կամ անհամոզ՝ որ իրենք մէկ արիւնէ առաջ եկած սերունդներ են՝ բաժանուած ցեղերով ու կրօնով. ձուլումն ինչ վախճան ալ ունենար, պիտի կազմէր իրեն համար քաղաքականապէս զօրեղ ու պատերազմիկ ազգ մը, որովհետեւ իրեն համար նշանակութիւն չունէր առանձնակի ազգ ու կրօն»: (Յ. Շ.՝ «Քիւրդօ-Հայ Պատմութիւն», էջ 86-88):

Ընդհանուր առմամբ, վերյիշուած ծրագիրը կը հետապնդէր Բէդիրխան բեյը: Այդ ժամանակներու քաղաքական կեանքը նկատի առնելով, նկատի առնելով նաեւ Քիւրդիստանի, Հայաստանի, Պարսկաստանի եւ Թուրքիոյ յետամնաց եւ աւատապետական վիճակը, այս ծրագիրը կը գտնենք վերին աստիճանի հասուն եւ ըստ ամենայնի գոհացուցիչ՝ հայ-քրդական դաշնակցութիւն մը կազմելու՝ ընդդէմ Թուրքիոյ:

Ի հարկէ, այս մէջբերուած հատուածի ձեւակերպման եւ քանի մը արտայայտութեանց ուշադրութիւն դարձնելու չէ: Յ. Շահապետանը, հակառակ անոր որ կը համակրի հայ-քրդական համերաշխութեան մը, ակնյայտնի է որ անցած դէպքերը իրենց պատմական արժէքովը չէ կրցած ըմբռնել: Այդ բանին պէտք է վերագրել հեղինակի հետեւեալ արտայայտութիւնները՝ «բռնի միջոցներ», «ձուլումի քաղաքականութիւն» հայ իշխաններու միանալու առթիւ, «կամայ թէ ակամայ» արտայայտութիւններ, որոնք բնաւ տեղին չեն: Եւ կարծել թէ հայ-քրդական համերաշխութիւն մը կամ խնամիութիւն մը հայերը քրդերու մէջ պիտի ձուլէր, ինքնին թիւրիմացութիւն մըն է: